# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**11 հուլիսի 2025 թվականի № 276-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 13-Ի № 220-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2025 թվականի հունիսի 23-ի № 236-Ա որոշումը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2025 թվականի հունիսի 13-ի *«Ռուզաննա Ավալյանին Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի «Արամուսի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնից ազատելու մասին»* № 220-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1) 2-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«Մինչև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով մրցույթի արդյունքներով *(տնօրենի թափուր պաշտոնում)* պաշտոնի նշանակումը՝ 2025 թվականի հուլիսի 11-ից Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության *«Արամուսի առողջության առաջնային պահպանման կենտրոն»* պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել կազմակերպության ընտանեկան բժիշկ ***Ռուզաննա Իսրայելի Ավալյանի*** վրա:»:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչությանը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել և անցկացնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Արամուսի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հանձնման-ընդունման աշխատանքները և կազմել համապատասխան արձանագրություն:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ** **Ա. ՄԱՀԱԿՅԱՆ**

**2025 թվականի հուլիսի 11**
**ք. Հրազդան**